ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

21 մարտի 2022 թվականի քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան, հետեւյալ կազմով՝ նախագահող՝ Դատարանի նախագահ Է.Վ. Հայրիյան, զեկուցող դատավոր՝ Տ.Ն. Նեշատաեւա, դատավորներ՝ Ա.Մ. Աժիբրահիմովա, Ժ.Ն. Բահիշեւ, Դ.Գ. Կոլոս, Վ.Խ. Սեյտիմովա, Գ.Ա. Սկրիպկինա, Ա.Է. Թումանյան, Ա.Ա.Ֆեդորցով, Կ.Լ. Չայկա,

դատական նիստի քարտուղար՝ Ա.Ա. Պանով, ուսումնասիրելով գործի նյութերը, լսելով զեկուցող դատավորին,

ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-րդ, 96-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 72-րդ, 85-րդ հոդվածներով,

տրամադրում է խորհրդատվական եզրակացություն՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթների պարզաբանման վերաբերյալ՝ Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարության դիմումի հիման վրա։

I. Դիմողի հարցը

Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը (այսուհետ՝ դիմող) դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) դրույթների պարզաբանման վերաբերյալ դիմումով։

Դիմողը նշում է, որ «Եվրասիական տնտեսական միությունում սոցիալական երաշխիքների, առանձնաշնորհումների եւ անձեռնմխելիությունների մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 32 հավելված. այսուհետ՝ թիվ 32 հավելված) 2-րդ կետի համաձայն՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի (այսուհետ՝ Հանձնաժողով, ԵՏՀ) անդամները, Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրենները, նրանց տեղակալները եւ աշխատակիցները միջազգային ծառայողներ են։

Դիմողը նշում է, որ Պայմանագիրը «միջազգային ծառայող» հասկացության սահմանում չի պարունակում, սակայն միջազգային իրավունքի տեսության մեջ տվյալ կատեգորիային են դասվում միջազգային կազմակերպությունների հաստիքային բոլոր աշխատակիցները։ Դրա կապակցությամբ դիմողը Դատարանին խնդրում է տալ պարզաբանում՝ հետեւյալ հարցերի վերաբերյալ.

1) արդյոք «միջազգային ծառայողներ» եւ «միջազգային կազմակերպության ծառայողներ» եզրույթները հավասար նշանակություն ունեցող հասկացություններ են,

2) արդյոք թույլատրելի է Հանձնաժողովի կոլեգիայի անդամներին, Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրեններին, նրանց տեղակալներին եւ աշխատակիցներին դասել «միջազգային կազմակերպության ծառայողներ» կատեգորիային։

II. Դատարանի իրավասությունը

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 2 հավելվածը հանդիսացող՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի (այսուհետ՝ Դատարանի ստատուտ) 46-րդ կետին համապատասխան՝ Դատարանը Եվրասիական տնտեսական միության մարմնի կամ անդամ պետության (այսուհետ՝ ԵԱՏՄ, Միություն) դիմումի հիման վրա կատարում է Պայմանագրի, Միության շրջանակներում միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների որոշումների դրույթների պարզաբանում։

Դատարանի ստատուտի 49-րդ կետի համաձայն՝ պարզաբանման վերաբերյալ դիմումի հետ միասին անդամ պետության անունից Դատարան դիմում են ներկայացնում անդամ պետության լիազորված մարմինները եւ այն կազմակերպությունները, որոնց ցանկը սահմանվում է յուրաքանչյուր անդամ պետության կողմից, եւ այդ դիմումը Դատարան է ուղարկվում դիվանագիտական ուղիներով։

Ղազախստանի Հանրապետության նախագահի «Եվրասիական տնտեսական միության դատարան դիմելու համար լիազորված մարմինների եւ կազմակերպությունների մասին» 2015 թվականի մայիսի 6-ի թիվ 20 հրամանագրի 1-ին կետի 2-րդ ենթակետով (հաշվի առնելով Ղազախստանի Հանրապետության նախագահի 2021 թվականի փետրվարի 27-ի թիվ 526 հրամանագրով կատարված փոփոխությունները) սահմանված է, որ Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն այն մարմիններից մեկն է, որոնք լիազորված են Պայմանագրի, Միության շրջանակներում միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների որոշումների դրույթների պարզաբանումների վերաբերյալ Ղազախստանի Հանրապետության անունից Դատարան դիմում ներկայացնելու համար։

Համապատասխան տեղեկատվությունը Դատարան է ուղարկվել Բելառուսի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության դեսպանատան

նոտայով։ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի (այսուհետ՝ Դատարանի կանոնակարգ) 10-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով՝ պարզաբանման վերաբերյալ դիմումն ստորագրվում է Դատարանի կանոնակարգի 31-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձի կողմից։

Դատարանի կանոնակարգի 31-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ որպես անդամ պետությունների ներկայացուցիչներ Դատարանում կարող են հանդես գալ Դատարանի ստատուտի 49-րդ կետի համաձայն սահմանված՝ անդամ պետությունների լիազորված մարմինների եւ կազմակերպությունների ղեկավարները։ Դիմումն ստորագրված է Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարի՝ Դատարանի ստատուտի 46-րդ եւ 49-րդ կետերով նախատեսված կարգով Դատարան դիմելու համար լիազորված մարմնի ղեկավարի կողմից։

2021 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ Դատարանը քննության է առել Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարության՝ Պայմանագրի դրույթների պարզաբանման վերաբերյալ հարցումը։

III. Ընթացակարգը Դատարանում

Դատարանի կանոնակարգի 72-րդ հոդվածի համաձայն՝ պարզաբանման վերաբերյալ դիմումներով դատավարությունը ներառում է պարզաբանման վերաբերյալ դիմումի, պարզաբանման վերաբերյալ դիմումի մեջ նշված հարցին առնչվող այլ փաստաթղթերի եւ նյութերի կամ այդ փաստաթղթերի եւ նյութերի վավերացված պատճենների ներկայացումը, ինչպես նաեւ Դատարանի կողմից խորհրդատվական եզրակացության նախապատրաստումը։

Դատարանի ստատուտի 68-րդ կետի համաձայն՝ պարզաբանման վերաբերյալ գործերի քննության կարգը սահմանվում է Դատարանի կանոնակարգով։

Դատարանի ստատուտի 73-րդ կետով նախատեսվում է, որ Դատարանը պարզաբանման վերաբերյալ գործերը քննում է Դատարանի մեծ կոլեգիայի նիստին։

Դատարանի ստատուտի 55-րդ կետով սահմանված կարգով Դատարանի կողմից քննության համար գործի նախապատրաստման շրջանակներում պատասխաններ են ստացվել դիմողից, Եվրասիական տնտեսական հանձնաժողովից, այլ հաստատություններից եւ կազմակերպություններից։

IV. Դատարանի եզրահանգումները

1. Պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Կողմերը հիմնադրում են Եվրասիական տնտեսական միությունը, որի շրջանակներում ապահովվում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի շարժի ազատությունը, Պայմանագրով եւ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսության ճյուղերում համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացումը։

Պայմանագրի 1-ին հոդվածի 2-րդ կետի ուժով՝ Միությունը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է, որն ունի միջազգային իրավասուբյեկտություն։ Միջազգային կազմակերպության իրավասության իրականացման համար ԵԱՏՄ-ում ստեղծվել են միջազգային գործառույթներ իրականացնող համապատասխան մարմիններ։

Միության միջազգային իրավական կարգավիճակը ենթադրում է, որ հիմնադիր պայմանագիրը Միության ներքին կազմակերպումը կարգավորելու գործընթացում հանդես է գալիս որպես հիմնարար ակտ (Դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 11-ի խորհրդատվական եզրակացության 15-րդ կետի առաջին պարբերություն)։

Հիմնադիր պայմանագիրը 8-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսում է, որ Միության մարմիններն են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը, Եվրասիական միջկառավարական խորհուրդը, ինչպես նաեւ մշտական հիմունքով գործող Հանձնաժողովը եւ Դատարանը։

Պայմանագրի 18-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը Միության մշտապես գործող կարգավորող մարմին է։ Հանձնաժողովը կազմված է Խորհրդից եւ Կոլեգիայից։

Իր հերթին, «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի (Պայմանագրի թիվ 1 հավելված. այսուհետ՝ «Հանձնաժողովի մասին» հիմնադրույթ) 23-րդ կետով նախատեսվում է, որ Հանձնաժողովի խորհրդի մեջ մտնում է յուրաքանչյուր անդամ պետությունից մեկական ներկայացուցիչ, որը Կառավարության ղեկավարի տեղակալն է եւ օժտված է անհրաժեշտ լիազորություններով՝ իր պետության օրենսդրությանը համապատասխան։ Հանձնաժողովի կոլեգիան բաղկացած է Հանձնաժողովի կոլեգիայի անդամներից, որոնցից մեկը Հանձնաժողովի կոլեգիայի նախագահն է («Հանձնաժողովի մասին» հիմնադրույթի 31-րդ կետ)։

«Հանձնաժողովի մասին հիմնադրույթի» 54-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի խորհրդի եւ Հանձնաժողովի կոլեգիայի գործունեության ապահովումն իրականացվում է Հանձնաժողովի դեպարտամենտների կողմից։ Հանձնաժողովի դեպարտամենտների կազմի մեջ մտնում են միջազգային կազմակերպությունում՝ Եվրասիական տնտեսական միությունում ծառայողական գործառույթներ կատարող պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները։

«Պաշտոնատար անձինք» եւ «աշխատակիցներ» հասկացությունները պարզաբանվում են Պայմանագրի 2-րդ հոդվածում։ «Պաշտոնատար անձանց» տակ հասկացվում են անդամ պետությունների այն քաղաքացիները, որոնք նշանակված են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտների տնօրենների եւ Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրենների տեղակալների պաշտոններում։ Պայմանագրի 2-րդ հոդվածի ուժով՝ «աշխատակիցներ»-ի տակ հասկացվում են անդամ պետությունների այն քաղաքացիները, որոնք Միության մարմիններում աշխատում են իրենց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի հիման վրա, եւ որոնք պաշտոնատար անձինք չեն։

Այսպիսով, Միությունը միջազգային կազմակերպություն է, որի իրավահիմնադիր փաստաթղթերում սահմանված է Հանձնաժողովը՝ որպես մշտապես գործող մարմին, ինչպես նաեւ այն լիազորված անձինք, որոնք իրենց միջազգային գործառույթներն իրականացնում են Հանձնաժողովում եւ անվանվում համաձայն Միության հիմնադիր փաստաթղթերի։

2. «Հանձնաժողովի մասին» հիմնադրույթի 56-րդ կետով Հանձնաժողովի պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները սահմանված են որպես միջազգային ծառայողներ։

Իրենց հերթին, Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, ինչպես եւ պաշտոնատար անձինք ու աշխատակիցները միջազգային ծառայողներ են՝ թիվ 32 հավելվածի 2-րդ կետի համաձայն։

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն միջազգային պայմանագրի նորմերի մեկնաբանման ժամանակ համատեքստը հաշվի առնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ թիվ 32 հավելվածի 2-րդ կետի նորմը, գործածելով «միջազգային ծառայողներ» եզրույթը, նպատակ ունի սահմանելու միջազգային կազմակերպությունում աշխատող անձանց անկախության մասին միասնական պահանջներ։

Այսպես՝ թիվ 32 հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ միջազգային ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս (պաշտոնեական (ծառայողական) պարտականությունները կատարելիս) չպետք է ցուցումներ պահանջեն կամ ստանան պետական իշխանության մարմիններից կամ անդամ պետությունների պաշտոնական անձանցից, ինչպես նաեւ Միության անդամներ չհանդիսացող պետությունների իշխանություններից։ Նրանք պետք է ձեռնպահ մնան որեւէ գործողությունից, որը համատեղելի չէ միջազգային ծառայողների իրենց կարգավիճակի հետ։

Թիվ 32 հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ Միության անդամ պետությունները պարտավորվում են հարգել միջազգային ծառայողների

լիազորությունների միջազգային բնույթը։ Առանձնաշնորհումները եւ անձեռնմխելիությունները լիազորված անձանց տրամադրվում են նրանց կողմից իրենց լիազորությունների արդյունավետ, անկախ կատարման (պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների կատարման) համար՝ Միության շահերից ելնելով (թիվ 32 հավելվածի 28-րդ կետ)։

Այսպիսով, Դատարանի մեծ կոլեգիան գալիս է այն եզրահանգմանը, որ Միության իրավունքին համապատասխան՝ միջազգային կազմակերպության՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մշտապես գործող մարմնում իրենց լիազորություններն անկախ կերպով կատարում են (ծառայում են) հիմնադիր Պայմանագրում «միջազգային ծառայողներ» անվանվող անձինք։

3. Նկատի ունենալով, որ Եվրասիական տնտեսական միությունում գործունեություն են իրականացնում մշտապես գործող երկու մարմիններ (Հանձնաժողովը եւ Դատարանը), անհրաժեշտ է ընդգծել, որ այդ մարմիններում իրենց պարտականություններն են կատարում լիազորված անձինք՝ Կոլեգիայի անդամները, ԵՏՀ-ի պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները. դատավորները, Դատարանի ապարատի պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները (Պայմանագրի 18-րդ հոդվածի 1-ին կետ, 19-րդ հոդվածի 1-ին կետ)։

Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ Միության իրավունքի համաձայն՝ Հանձնաժողովում միջազգային ծառայության ներսում տարբերակվում են Հանձնաժողովի կոլեգիայի անդամների կարգավիճակը եւ պաշտոնատար անձանց ու աշխատակիցների կարգավիճակը։

Հանձնաժողովի կոլեգիայի անդամները միջազգային գործառույթներ են իրականացնում Միության կանոնադրական փաստաթղթերում ամրագրված լիազորությունների համաձայն եւ օժտված են դրանց կատարման համար անհրաժեշտ առանձնաշնորհումներով եւ անձեռնմխելիություններով։

Թիվ 32 հավելվածի 18-րդ կետով սահմանված է, որ Հանձնաժողովի կոլեգիայի անդամները եւ Միության Դատարանի դատավորները, եթե գտնվելու պետության քաղաքացիներ չեն, առանձնաշնորհումներից եւ

անձեռնմխելիություններից օգտվում են այն ծավալով, որը «Դիվանագիտական կապերի մասին» 1961 թվականի ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայով նախատեսված է դիվանագիտական գործակալի համար։

Հանձնաժողովի պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների կարգավիճակը Միության իրավունքի մեջ այլ կերպ է լուծված եւ սահմանված է որպես կոնկրետ կազմակերպության հետ աշխատանքային պայմանագիր կնքած՝ այդ կոնկրետ կազմակերպության ծառայողների կարգավիճակ՝ թիվ 32 հավելվածի V բաժնի համաձայն։

Հանձնաժողովի պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները մասնագիտորեն ապահովում են Միության մարմինների իրավասությունից բխող խնդիրների լուծումը (Դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի խորհրդատվական եզրակացության «Դատարանի եզրահանգումները» III բաժնի 2-րդ կետ)։ Միջազգային գործառույթների (պաշտոնական (ծառայողական) պարտականությունների) անկախ կատարումը երաշխավորելու համար ԵԱՏՄ միջազգային ծառայողներին տրամադրվում են Պայմանագրում նշված միջազգային առանձնաշնորհումները եւ անձեռնմխելիությունները։

Դատարանի մեծ կոլեգիան գալիս է այն եզրահանգմանը, որ Կոլեգիայի անդամները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները, ունենալով տարբեր կարգավիճակներ, դասվում են «Եվրասիական տնտեսական միություն» միջազգային կազմակերպության միջազգային ծառայողների շարքին։

4. Հաշվի առնելով շարադրվածը՝ Դատարանի մեծ կոլեգիան հետեւյալ պատասխաններն է տրամադրում Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարցերին.

4.1. «Միջազգային ծառայողներ» եւ «միջազգային կազմակերպության ծառայողներ» եզրույթները հավասար նշանակություն ունեցող հասկացություններ չեն։ Լիազորված անձինք գործառույթներ են իրականացնում կոնկրետ միջազգային կազմակերպությունում եւ անվանվում են համաձայն տվյալ կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի։

4.2. Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրենները, նրանց տեղակալները եւ աշխատակիցները դասվում են «Եվրասիական տնտեսական միություն» միջազգային կազմակերպությունում միջազգային ծառայողների (պաշտոնական (ծառայողական) պարտականություններ կատարողների) շարքին։

V. Եզրափակիչ դրույթներ

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմողին։ Խորհրդատվական եզրակացության տեքստը հրապարակել Դատարանի պաշտոնական ինտերնետ կայքում։

Նախագահող՝ Է.Վ. Հայրիյան

Դատավորներ՝ Ա.Մ. Աժիբրահիմովա

Ժ.Ն. Բաիշեւ

Դ.Գ. Կոլոս

Տ.Ն. Նեշատաեւա

Վ.Խ. Սեյտիմովա

Գ.Ա. Սկրիպկինա

Ա.Է. Թումանյան

Ա.Ա.Ֆեդորցով

Կ.Լ. Չայկա

Պատճենը ճիշտ է

Զեկուցող դատավոր՝

21 մարտի 2022 թ. [*կնիք, ստորագրություն*] Տ.Ն. Նեշատաեւա